

ՀԱՆԴԻՍ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻՑ

(Ըարունակութիւն. էջ 75 :)

Մարդ.

Մարդս թէպէտե եղականապէս ճռ խայցած ըլլայ բանականութեան պարգևք, 'ի վերայ այսր ամենայնի իր բնական հանգամանաց շատերուն մէջ անհուն կերպով ստորին է քանզայլ կենդանիներն որ իրմէ քիչ կը տարբերին մեծութեամբ: Ոչ բաւական երագ է ոտքով, որ կարող ըլլայ իր որսոյն ետևէն համնիլ, կամ իր թշնամիներէն փախչիլ. չունի և ոչ բնական զէնք մը վնասողական կամ պաշտպանողական, ինչպէս ունին կենդանեաց այնչափ դասերն որ իր չորս կողմը կը շրջապատեն: Ոչ միայն տկար է մարդս և անպատճապար, այլ և բնութիւնն իսկ ժխտեր է հոգալու իրեն այն ամեն միջոցները՝ պաշտպանելու զինքը տարբերաց անբարեխառնութեանը դէմ, զորոնք ինքն այնպէս սիրողաբար առատաձեռներ է ուրիշ կենդանեաց, որ ստորին կարդ մը կը գրաւեն գործարանաւորեալ արարածոց շարքին մէջ: Մարդս չունի ոչ անամնոց մազը և ոչ թունոց փետուրներն որ պաշտպանեն զինքը եղանակաց խստութեանցը դէմ, և իր մարմինը այնպիսի մորթով մը ծածկուած է բազմաճոխ ջղերով, որ զայն տասն, հարիւր, հազար անգամ աւելի զգայուն կ'ընեն քան զմորթ ո՞ր և իցէ մէկու մը այն արարածներէն զորոնք բնութիւնն այնպէս խնամքով և սիրողաբար պաշտպաներ է:

Գալով աշխարհք մարդս քան զայլ ամենայն արարած տկար և փափուկ է, և երկար ժամանակ պէտք սւնի ոչ միայն իր բարեկեցութեանն համար, այլ նոյն իսկ իր էութեանն համար, ճնողացն անդուլ և անդադար հոգոյն ու խնամոյը:

Եւ սակայն այս մարդս, 'ի բնէ այս-

պէս աղքատ, տկար, անգէն, մերկ, տէր և իշխան է բոլոր նիւթական աշխարհիս: Ինքը չկրնար թուշելով բարձրանալ օդուն մէջ, բայց անոր բնակչաց թուիչը կը բռնէ և իր ողքը կը խոնարհեցունէ զանոնք: Չկրնար իջնել ջրոց խորերը, բայց գիտէ հանել անկէ անոր բնակիչներն իր պէտքը լեցունելու և իր ախորժակը շատացընելու համար: Իր մարմինը պաշտպանուած չէ որ և իցէ բնական հագուստով մը, բայց անտառին կենդանիներն ու օդուն թուշունները բռնադատուած են տալու իրեն պիտոյիցն համար իրենց մորթն ու իրենց փետուրն: Անհամար թելաւոր տունկեր, որ իրենց բնական վիճակին մէջ անպէտ պիտի մնային, մարդուս արուեստով այնպիսի նիւթոց կը փոխուին, որոնցմով կարելի է անհուն կերպով հագուստուներ շինել իր մարմինը ծածկելու համար: Անկարող ըլլալով կրելու բարեխսառնութեանց և կիմայից փոփոխութիւնները, կը բռնադատէ զերկիրս ծոցն իրեն բանալու և անբապառելի քանակութեամբ վառելի նիւթմաստակարարելու, որով արուեստական ջերմութիւն կը գոյացընէ ցրտոյն խրստութիւնները չափաւորելու և բարեխսառն ջերմութիւն մը ունենալու համար: Չկրնար վազել երագ, բայց գիտէ բնտանեցունել ստորին արարածոց երագուտունքն, որոնք բացարձակ հնազանդութեամբ զինքը կը տանին ուր որ կ'ուզէ: Այսափովս գոհ չըլլալով, մեքենաներ հնարեր է ջրոյն մակերեսութիւն վրայ ընդէմ հակառակ հողմոց և հոսանաց, և երկրիս մակերեսութիւն վրայ այնպիսի երագութեամբ մը վազելու՝ որ զբեթէ կը զերազանցէ քան զերագագոյն թըռչուոց թուիչը և կը հաւասարի մըրկի երագութեանը :

Ուրեմն ոչ միայն ամենեին իրաւունք չունի գանդատելու մարդս՝ իր տկար և անգէն գործարանաւորութեանը վրայ՝ մանաւանդ թէ այս առերևոյթ պակասութեանց պարտական է իր առաւելութեանց մեծագոյնը. վասն զի այս ըստոյդ է որ եթէ մարդս ունեցած ըլլար

գործարաններ պաշտպանութեան, մխա-
սողութեան, տեղաշարժութեան և իր
մարմնոյն պահպանութեանն, ամեննեին
նման անոնց՝ որ տրուած են ընդհանրա-
պէս ստորին դասերուն, ոչ երբէք կ'ու-
նենար այն սաստիկ մղումն որ անընդ-
դիմակ կը մղէ զինքը այնչափ հրաշալի
և զրեթէ անհաւատալի հնարից և զիւ-
տերու։ Եւ այս դիտողութիւնս նոր չէ։
շատ դար առաջ արդի յառաջադիմու-
թենէն և շատ ժամանակ առաջ քան
այն մեծամեծ գիւտերն, որոնք յաւի-
տեան պիտի անմահացընեն վերջին հա-
րիւր տարիներս, Գաղենոս կ'ըսէր որ
եթէ մարդս անսանոց հագուստն ու
պաշտպանութեան զէնքն ունենար, ոչ
երբէք ճարտարարուեստ կ'ըլլար, զրահ-
ներ չէր հագուեր, կամ սուր ու նիզակ
չէր շիներ, ոչ սանձ կը հնարէր և ոչ ձի
կը հեծներ կամ գաղանները կ'որսար.
չէր մշակեր խաղաղութեան արուեստ-
ները, չէր շիներ ոչ սրինդ ու ոչ քնար,
չէր կանգներ ոչ տուն կամ պալատ և
ոչ տաճար Աստուծոյ, ոչ օրէնք կը հաս-
տատէր, ոչ գիր կը հնարէր, որով հա-
ղորդակցէր հին իմաստնոց հետ, խօ-
սակցելով մերթ Պղաառնի հետ, մերթ
Արիստոտելի հետ և մերթ Հիպատիու-
սայ հետ։

Բարբառոյ պարգևէն հարկաւորապէս
կը ծագէ ընկերականութեան բնագլու-
մըն և մարդս չկրնար առանձին ապրիլ։
Իր տեսակին ընկերութիւնը կը փնտոէ,
և կենդանեաց այն գասուն կը վերաբերի,
զոր բնապատումք ընկերասէր կը կո-
չեն։ Ծնկերականութեան այս բնագլու-
մէն առաջ եկած առաւելութիւնքն ան-
բաւ են, վասն զի առանց անոր մարդս
փոխանակ ըլլալու ինչ որ է, միահե-
ծան տէր բնութեան, կ'ըլլար թշուա-
ռագոյն կենդանիներէն մէկը և քիչ ա-
տենէն կ'անհետանար երկրիս երեսէն։
Բայց ընկերականութեամբ իւրաքան-
չւր անհատ կ'օգնէ ուրիշի և օգնու-
թիւն կը գտնէ ուրիշէ։ Իւրաքանչիւր ոք
մշակելով մասնաւոր կարողութիւն մը
կամ կրթութիւն մը իր միւս ընկերնե-
րէն աւելի, զայն օգտակար կ'ընծայէ

անոնց և փոխադարձ համապատշաճ ծա-
ռայութիւններ կ'ընդունի անոնցմէ՝ ո-
րոնք մշակեր են ուրիշ մասնաւոր կա-
րողութիւններ, որոնցմէ ինքը զուրկ է,
և այսպէս յերևան կու գայ այն ընդար-
ձակ ու գեղեցիկ սկզբունքն որ կը ճանչ-
ցուի բաժանումն աշխատութեան ա-
նուամբ, որուն արդիւնքն է նիւթական
և ընկերական երջանկութիւնը։

Ինչպէս ուրիշ ընկերասէր կենդանիք,
մարդս ալ ՚ի բնէ պտղակեր կամ խո-
տաճարակ է, այսինքն պտղօք ու կա-
նաչեղինքը ապրելու համար ստեղծուած
է։ Այս եղբակացութիւնս միայն հիմն
չունի այն համեմատութիւնն որ կը դի-
տուի մարդուս և ընկերասէր միւս կեն-
դանեաց վրայ, այլ նաև կը հաստատուի
անոր սննդեան գործարանաց նկարա-
գիրներէն։ Մսակեր տեսակաց ակու-
ները մասնաւորապէս ձևացած են պատ-
ռելու և ծամելու միաը, որ անոնց յա-
տուկ սնունդը կը կազմէ։ Շնատամունքն
աճեցուն են սուր և կոր։ և հերձատա-
մունքն ալ շնատամանցն կարագիրքն ու-
նին։ Այն ատամունքն որ աղօրեաց տե-
ղը կը փոխանակեն, ծայրաւոր և հա-
տու են, և մէկմէկու վրայ այնպէս կ'ազ-
դեն իբր թէ մկրատի մը երկու բերան-
ներն ըլլային։ Ուրեմն այս ատամնա-
ւոր կազմարանը շատ լաւ կերպով կը
ծառայէ պատուելու և կարելու միաը՝
յառաջ քան ստամիքս երթալը։ Ծնդ-
հակառակն պտղաճարակ կենդանիք
հերձատամունք և աղօրիք ունին։ շնա-
տամունք ալ ունին, բայց քիչ աճեցուն
են, որոնք հերձատամանցն նման կը գոր-
ծեն։ Երկու ծամելեաց աղօրիքը, իրենց
աղատ ծայրը գրեթէ տափարակ՝ ուղ-
ղակի մէկզմէկ կը չօշափեն և վրայէ վր-
րայ կու գան, իբր թէ աղացքի երկու
երկանագրար ըլլային, և ծամելիքը կող-
մնակի պտտի շարժմամբ ոչ միայն կա-
րող են ճզմելու այլ նաև իրենց մէջ առ-
նելու ուտելիքը։ Այս գործողութիւն-
ներն այն ամենն են որ պէտք են կա-
նաչեղինաց համար, և անյարմար կ'ըլ-
լան կենդանական ուտելեաց համար։

Ատամնային կազմարանին այս նկա-

րագրութենէն իւրաքանչիւր ոք կրնայ ճանչնալ մարդուս ատամանց ձևն ու կազմութիւնը, և թէ ասոնք որչափ որ կրնաննշան մը ըլլալ անոնց պատշաճուտելեացն, յայտնի է թէ մարդս խոտաճարակ է: Բայց առանց ասոր ալ այս եղրակացութիւնս կը հիմնի նաև անոր մարսողական կազմարանին քննութեանը վրայ:

Մսակեր տեսակաց աղիքն, որոնց մէջէն կ'անցնին ուտելիք, ընդհանրապէս կարծ են. երկայնութիւնը անոնց մարմնոյն գրեթէ երեք և չորս անգամն է. իսկ խոտաճարակ տեսակաց աղիքին երկայնութիւնն է սովորաբար տասը կամ տասուերկու և երբեմն (ինչպէս ոչխարին) քսանըութը անգամ մարմնոյն երկայնութիւնը: Այս սկզբանս համեմատ կը գտնենք որ մարդուս աղիքն, ինչպէս ատամունքն, յարմար են բուսական մննդեան, այնպիսի երկայնութիւն ունենալով՝ որ կը համեմատի մարմնոյն երկայնութեանն, ինչպէս կը դիտենք ուրիշ խոտաճարակ տեսակաց վրայ, և համեմատնելքին կազմութիւն:

Ուրեմն ինչպէս եղեր է որ մարդս փոխանակ բոլորովին խոտաճարակ ըլլալու՝ է ամենաճարակ, անտարբերաբար սնանելով թէ խոտեղինք և թէ մնեղինք: Պատասխանը զիւրին է. մարդս չկրնար մնեղինք սնանիլ եթէ նախ չպատրաստէ զայն կրակով, կամ որ նոյն է, որպէս զի միսը կարող ըլլայ մարդուս կերակուր ըլլալու՝ պէտք է որ եփուած ըլլայ:

Բնական մասնաւորութիւններէն մէկն որով մարդս կը զանազանուի կենդանական թագաւորութեան ուրիշ անդամներէն՝ այն զիւրութիւնն է, որով իր գործարանաւորութիւնը կը յարմարի կիմայից տարբերութեանցը, և այս իր նկարագիրներէն մէկն է որ կը թուին հաւաստել իր բարձր կոչումը տիրելու աշխարհիս բովանդակ մակերևութիւն վրայ: Ի սկզբան Արարշապետն հաստատելով զինքն առանձին դաւառի մը մէջ, իր ցեղը բազմացաւ ու ցրուեցաւ, ցուցընելով յայտնապէս շարունակ ըե-

րում մը գաղթականութեան: Զվախնալով ոչ բևեռին խստութիւններէն և ոչ արևադարձից հրակէզ արևէն, մարդկային ցեղը սփուրեցաւ երկրագնտիս բովանդակ երեսին վրայ: Ըստ վիճակագրական հաշիւներու որ ճիշդ կը սեպուին, որչափ որ կրնան ըլլալ այսպիսի հաշիւք, կը համարուի որ երկրագնտիս բոլոր բնակչաց թիւն ըլլայ 1283000000, հետևեալ համեմատութեամբ բաշխուած: Երկրորդ սիւնակը կը ցուցընէ իւրագանչիւր քառակուսի աշխարհագրական մղոնին բնակչաց թիւը, համարելով աշխարհագրական մղոնը $\frac{1}{13}$ մասն աստիճանի հասարակածին:

ՄԱՍԻՆՔ ՄԱԿԵՐԵՒԽՈՅՑ ԲԱՐԱԿ ԱՌ □ ՄՊՐ

ԱՇԽԱՐՀԻ	□ ԹՎՅՆ
Ա. Եւրոպա	182571 272000000 1490
Բ. Ասիա	793964 750000000 945
Գ. Աֆրիկէ	543570 200000000 368
Դ. Ամերիկա	750055 59000000 79
Ե. Աւստրալիա	161452 2000000 12
ԲԱԼԵԿԱՅԻՆ ԵՐ	
Կիբք հարաւոյ	2288 "
<hr/>	
ԲՈՎԱՆԴԱԿ	2433900 1283000000 527

Բնակչաց խտութիւնը, որ վերջին սիւնակը կը ցուցընէ, կախումն ունի առաւելապէս քաղաքականութենէ և բարեկեցութենէ քան թէ կիմայէ: Ըստ այսմ կը տեսնենք որ բնակչաց թիւն, առ իւրագանչիւր քառակուսի մղոն, Երրորդայի այլ և այլ տէրութեանց մէջ հետևետլ կերպով է.

ԱՆԳԼԻԱ	4781
Գաղղիա	3746
Բրուսիա	:	3375
Ռուսիա	617

Յետ տալու այս հարևանցի տեսութիւնը մարդկային ցեղին բնական գործարանաւորութեանն ու պայմանացը վրայ, անցնինք նշանակելու Մարդ կենդանաւոյն յառաջատական զարգացումը խանձարուղքէն ինչուան գերեզման:

Ընդհանրապէս մարդիկ մէկ մէկ կը ծնանին, այսինքն է մէկ առ իւրաքանչիւր ծնունդ: Արտաքոյ կարգի դիպաց

մէջ երկուք միանգամայն կը ծնանին , որ երկուորեակը կ'ըսուին : Իսկ դէպքն յորում երեք կամաւելի ծնանին միանցամայն այնչափ ցանցառ է որ մասնաւոր անուն մը չէ առած ծանօթ լեզուաց մէջ : Վիճակագրական հաշիւները կը ցուցընեն որ 90 ծննդոց մէկն երկուորեակ է և 30000 ծննդոց մէկն եռորեակ է :

Ուրիշ պարագայ մըն ալ՝ որով մարդկային ցեղը կը զանազանուի ստորին կենդանեացմէ , ծննդոց երեւութին անկախութիւնն է տարւոյն եղանակներէն : Ընդհանրապէս կենդանիք այնպիսի եղանակի մէջ կը ծնանին որ շատ ձեռնտու է անոնց զարգացմանը : Ընդհակառակն տղայք ամեն եղանակի մէջ ալ կը ծնանին : Ի վերայ այսր ամենայնի բաղդատելով ծննդոց թիւն եղանակաց ընթացիցն հետ , կը գտնուի որ այս թիւը փոփոխական է , և այս զանազանութիւնը որոշ և ամենածզրիտ վերաբերութիւն մը ունի եղանակաց ընթացիցն հետ : Հասարակօրէն կը տեսնուի որ բարեխառն կիմայից տակ ծնունդը աւելի բազմաթիւ են ձմերան երեք ամսոց մէջ և նուազ ամարան երեք ամսոց մէջ : Ցրտագոյն կիմայից մօտենալով մեծագոյն և նուազագոյն թուոց ժամանակները կ'ուշանան և ջերմագոյն կիմայից մօտենալով՝ կը կանխեն :

Նորածին տղայոց թիւը հաւասարապէս բաշխուած չէ ըստ երկուց սեռից , առաւելլով միշտ արտոներն :

Այն ամեն երկիրներն՝ ուր վիճակագրական ճիշդ հաշիւ կը բռնուի՝ այս բանս հաստատութեամբ դիտուած է , և արժանի է մտագրութեան որ թէպէտ երկուց սեռից թուական համեմատութիւնն ենթակայ ըլլայ փոփոխութեան տարիէ մը ուրիշ տարի , բոլորական դումարն ըստ միջին հաշուի , ամեն տեղ զրեթէ անփոփոխելի է , թէպէտ և տարբեր ըլլայ տեղ մը բաղդատելով ուրիշ տեղոյ հետ : Ուստի բաղդատելով արու և էդ տղայոց թիւերն որ այս դարուս առաջին կիսուն մէջ ծնան 'ի Մեծն Բրիտանիա , գտեր են որ արտոներուն

թիւը կ'առաւելուր անփոփոխելի կերպով էցերուն թուէն տարուէ տարի փոփոխական համեմատութեամբ 25 էն 50 առ 100 . այս ամբողջ շրջանին մէջ առնուած միջինը կը ցուցընէ թէ առ իւրաքանչիւր հազար էդ ծննդոց կը համապատասխանեն հազար քառասուն արուք :

Գաղղիա , ըստ ճիշդ հաշուի , 44 տարիներուն մէջ որ կը վերջանան 1860 թուականով , կը տեսնուի որ առ իւրաքանչիւր հազար էդ ծննդոց կը համապատասխանեն իբր հազար վաթսուն արու ծնունդը : Ուստի արու ծնունդը Գաղղիա կ'առաւելուն քան զԱնգղիա համեմատութեամբ իբր 6 առ 4 :

Ուրիշ երկիրներ ալ եղած վիճակագրական ճիշդ հաշիւները կը ցուցընեն որ արու ծննդոց առաւելութեան համեմատութիւնը միջին տեղին կը բռնէ Անգղիոյ և Գաղղիոյ , ըլլալով արտոներուն թիւը 1050 առ իւրաքանչիւր հազար էդ :

Գաղղիա , Անգղիա և ուրիշ ամեն տեղուր ծննդոց ճիշդ վիճակագրական ցուցակներ կը բռնուին , ամենանշանաւոր պարագայ մըն ալ դիտուեր է , բնախօսական անծանօթ օրէնքէ մը առաջ եկած , և ընդհանրապէս գտնուեր է որ տղայոց այն մասնաւոր դասին՝ որուն կը վերաբերին ըստ մեծի մասին անհարազարք , նորածին արու զաւակաց թիւը շատ աւելի նուազ է քան օրինաւոր ամուսնութենէ ծնածներուն : Այսպիսի պարագայ մը կարելի էր պարզապէս պատահական համարել , թէ որ չդիտուէր անփոփոխելի կերպով ամեն ժամանակ , ամեն երկիր՝ ուր ծննդոց ցուցակները բաւական ճշգութեամբ կը բռնուին , և մի և նոյն երկրի մը ամեն գաւառներուն մէջ : Ուստի , օրինակի համար , մինչ Գաղղիա 1060 արու հարազատ ծննդոց կը համապատասխանեն 1000 էդ ծնունդը , հաշիւ կ'ըլլալի որ միայն 1040 արու անհարազատ ծննդոց համապատասխանեն 1000 էդ ծնունդը . և գտնուեր է որ այս համեմատութիւնը անփոփոխ կը պահուի և

Հաւասարապէս ամեն գաւառներուն
մէջ :

Գաղղիոյ հիւսիսային և հարաւային
այլ և այլ գաւառաց մէջ եղած ծննդոց
բաղդատութենէն տեսնուեր է որ նորա-
ծին տղայոց սեռից այս համեմատու-
թիւնը կլիմայէն չէ այլայլած :

Բայց պէտք չէ կարծել որ սեռից այս
համեմատութիւնը շարունակ է բոլոր
կենաց ընթացիցը մէջ : Կենաց հաւա-
նականութիւնն աւելի նպաստաւոր ըլ-
լարով կանանց քան թէ էրիկ մարդ-
կանց, ասոնց թիւը կը հաւասարի ա-
նոնց յառաջ քան հասնելու կենաց կէ-
սը, և քիչ մըն ալ առաջ երթարով կը-
շիւը դէպ 'ի միւս կողմը կը հակի ու
կանանց թիւը կ'առաւելու :

Իր շարունակուի :




Սեպտեմբեր.

**Ի սեպտեմբեր ամսոյ արժան է զեր-
կրորդ այգեկիթքն 'ի յայս առնել. և ըզ-
տունկ առնելոյ սերման համար տունկն՝
'ի յայգիքն պարտ է նշանել որ 'ի յօ-
տելոյն ժամն ճանաչես . և զոր նշանել
կամենաս՝ այսպէս նշանէ, զի լաւն քան
զքթեթն կամ զշուան որ կապէ մարդ
նշան՝ այս է, որ չհանէ զինքն ոչ հողմն
և ոչ անձրեւ¹. առ սուար և սև ձիւթ,
և ձիթ, և եփէ 'ի մէկտեղ 'ի խեցատ².
և զտունկն որ նշանել կամենաս այ-
նով խաչ հան . կամ զինչ կամիս նշան**

'ի տունկն, մինչև յիւր ժամն զնշանն
անշարժ գտանես : Եւ զձմեռան պահե-
լոյ միգերուն ամմին¹ յայս ամիսս է պարտ
արևել և ցամաքացնել, որ դիմացընէ, և
պահէ զմրգունքն : Եւ յայս ամիսս ա՛ռ
մեծ տախտակ և տուր շինել մեծ սըն-
տուկ . և ապա զտախտակացն միջոցնին
աղէկ կալ պատէ բրդով, և ապա առ
սև ձութ և կուենոյ² փայտի, կամ մար-
խի³ սղոցուք, և եռցո զձութն և զայն
յոլով 'ի ներքս արկ և խառնէ, և զսըն-
տուկն աղէկ ծեփէ ընդ ներքսէ, և ընդ
դրուցէ այլ օծնես՝ աղէկ է . և ապա ըզ-
մրգերն, ևս առաւել զխաղովն՝ 'ի ներքս
կապէ . և թէ խնձոր լինի կամ սերկեփէ՝
այլ սղոցիւք 'ի նոյն անուշահոտ փայ-
տից 'ի մնտկի յատակն լից և 'ի ներքս
թաղէ . նա երբ ուզես հան, իբր թէ
նոր 'ի ծառէն կու քաղես . բայց երբ
փակես զսնտուկն, զփակքն աղէկ ծե-
փէ որ օգն 'ի ներքս չմտանէ, թէ ոչ
զամենն աւերէ : Նոյնպէս և զլնկոյզն
'ի յայս ամիսս թափէ :

Ի ՎԱՍՏԱԿՈՑ ԴՐՈՑ



¹ Ամաններ :

² Չամ սագըւ :

³ Չըլա :

¹ Այսինքն՝ հունտ ժողուելու տունկերը մէ.
կալներէն զատելու համար, զանոնք չուանով կամ
քթանով կապելէն աղէկ է՝ վարը ըսելու ներկի
խառնուրդով նշան գնելն վրան խաչ մը կամ ու-
րիշ ձե մը, որ ոչ հովէ ոչ անձրեւ կ'աւրուի :

² Հողէ աման :